ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱԿՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ (ՀՕՊ) ԶՕՐՔԵՐԻ ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄԸ ԱՐՑԱԽԵԱՆ Ա. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ[1]

ՀԱՅԿ ՆԱԶԱՐԵԱՆ (nazaryan_h90.90@mail.ru)

ՄՈՒՏՔ

Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան անկախութեան հռչակման հենց սկզբից, երբ սկսուեցին ռազմական գործողութիւնները Արցախում եւ հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով, կենսական հարց դարձաւ օդային սահմանների պաշտպանութեան եւ հակառակորդի օդուժից եկող սպառնալիքի չէզոքացման հարցը: Այդ խնդիրը արցախեան առաջին պատերազմում եւ դրան յաջորդած տարիներին յաջողութեամբ լուծեցին նորաստեղծ ՀՀ զինուած ուժերի եւ Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան բանակի հակաօդային պաշտպանութեան (ՀՕՊ) զօրքերը:

Սակայն 2020ի արցախեան 44օրեայ պատերազմում ադրբեջանական զինուած ուժերի կողմից վարած այսպէս կոչուած «նոր սերնդի» պատերազմը ի ցոյց դրեց ՀՀ զինուած ուժերի եւ Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան բանակի առանձին զօրատեսակների, յատկապէս ՀՕՊ զօրքերի խոցելի կողմերը: Մասնաւորապես ադրբեջանական կողմի օգտագործած մեծաթիւ հետախուզական ու հարուածային անօդաչու սարքերի (ԱԹՍ) եւ գերճշգրիտ հրթիռային միջոցների կիրառումը տհաճ անակնկալ մատուցեց հայկական ՀՕՊ զօքերին, որոնց տրամադրութեան տակ եղած փոքրաթիւ զենիթահրթիռային համալիրների ու համակարգերի, ինչպէս նաեւ ռադիօտեղորոշիչ կայանների հիմնական մասը արհեստագիտականօրէն հնացած խորհրդային արտադրութիւն էին, իսկ ռադիօէլեկտրոնային պայքարի (ՌԷՊ) նոր միջոցները նոյնպես թուապէս շատ քիչ էին:

Վերջին պատերազմում հայկական կողմի պարտութիւնը ստիպում է լրջօրէն եւ ռազմագիտօրէն վերլուծել հայկական բանակաշինութեան մէջ թոյլ տրուած բացթողումներն ու սխալները, այդ թւում գնահատել եւ վերլուծել հայկական ՀՕՊ զօրքերի անցած ճանապարհը: Այս նպատակով

[1] Յօդուածը գրուած է հայկական ՀՕՊ զօրքերի ստեղծման 30ամեակի առթիւ: Յօդուածաշարի այս առաջին յօդուածը գրուած է բացառապէս արխիւային, պատմագիտական եւ ռազմագիտական հաւաստի, բաց եւ հասանելի սկզբնաղբիւրների հիման վրայ:

մենք սկսում ենք ներկայացնել գիտական յօդուածաշար՝ նվուիրուած դրանց ստեղծման ու զարգացման 30ամեայ պատմութեանը:

9K33M2 Օսա-ԱԿ ՋՀՀով զինուորական շքերթ. Երեւան, 21 Սեպտեմբեր 2011

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հայաստանի տարածքում ՀՕՊ համակարգի ստեղծման առաջին լուրջ քայլերը կատարուել են դեռեւս 1930ականների կէսերին: Մասնաւորապէս, Բանուորագիւղացիական կարմիր բանակի (ԲԳԿԲ) անդրկովկասեան ռազմական շրջանի զօրքերի հրամանատարի 1937 Մայիսի 21ի գրութեան հիման վրայ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան (ՀԽՍՀ) ժողովրդական կոմիսարների խորհուրդը մշակում է Երեւան եւ Լենինական (ներկայիս Գիւմրի) քաղաքների շուրջ ձեւաւորուած այսպէս կոչուած տեղային ՀՕՊ (ՏՀՕՊ, ռուս.՝ МПВО - Местная противовоздушная оборона) համակարգերի կատարելագործմանն ուղղուած աշխատանքների ծրագիրը, որն արտացոլում է 1937 Յունիսի 2ով թուագրուող փաստաթղթում[2]:

ՀԽՍՀ ՏՀՕՊ համակարգի ամրապնդման ուղղութեամբ լուրջ քայլեր կատարուեցին Բ. համաշխարհային պատերազմի եւ, յատկապէս, սառը պատերազմի տարիներին: Այդ ժամանակ ՏՀՕՊը գտնւում էր հանրապետութեան ներքին գործերի նախարարութեան (ՆԳՆ) ենթակայութեան տակ: Սակայն ՀԽՍՀ ներքին գործերի նախարարի 1960 Մարտի 2ի գաղտնի հրամանով ստեղծւում է յանձնաժողով՝ ՀԽՍՀ ՏՀՕՊ սպայակոյտը, հրամանատարական կէտի կապի հանգոյցը եւ ՏՀՕՊ քիմիական

[2] Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆ. 113, ց. 3, գ. 1748, թ. 1-3:

տարրալուծարանը ԽՍՀՄ պաշտպանութեան նախարարութեան ենթակայութեանը փոխանցելու նպատակով[3]:

ՀԽՍՀ ՏՀՕՊ համակարգի առանցքային բաղադրիչն էր նաեւ 1933ին բացուած Երեւանի օդակայանը (1981ին վերանուանուեց Էրեբունի): 1939-42՝ այստեղ էր տեղակայուած 84րդ կործանիչ օդային գունդը, որն իր սպառազինութիւնում ունէր Ի-16 (И-16) եւ Ի-153 (И-153) կործանիչներ, իսկ 1943-60՝ 25րդ կործանիչ օդային գունդը, որն իր սպառազինութեան մէջ ունէր ՄիԳ-3 (МиГ-3), ԼաԳԳ-3 (ЛаГГ-3), Ռ-39 (Р-39), Յկ-3(Як-3,) ՄիԳ-15 (МиГ-15), ՄիԳ-17 (МиГ-17) կործանիչներ[4]:

Այս գնդի հիմնական մարտական խնդիրը Հիւսիսատլանտեան դաշինքի (ՆԱՏՕ) անդամ Թուրքիայի հետ օդային սահմանի պաշտպանութիւնն էր: Մասնաւորապէս, 1958 Սեպտեմբերի 2ին երկու ՄիԳ-17 կործանիչներ օդ են բարձրանում որսալու համար ԱՄՆ ռազմօդային ուժերի (ՌՕՈՒ) սահմանախախտ Ս-130Ա (C-130A) հետախուզական ինքնաթիռը, որը թռել էր Թուրքիայի Ինճիրլիք ռազմախարսխից: Ինքնաթիռը խոցուեց կործանիչների կողմից, Լենինականից 44 կմ. դէպի հարաւ Սասնաշէն գիւղի տարածքում, ինչի հետեւանքով զոհուեցին անձնակազմի 6 անդամները եւ հետախուզական համակարգի 11 գործողները[5]:

Մէկ այլ դէպք տեղի ունեցաւ 1976 Օգոստոսի 24ին, երբ թուրքական ՌՕՈՒի սահմանախախտ ՌՖ-5Ա (RF-5A) հետախուզական ինքնաթիռը, թռելով Տիարպեքիրի ռազմախրսխից, իրականացնում էր լուսանկարահանում ՀԽՍՀ սահմանի երկարութեամբ: Այն խոցուեց Իգդիրի ուղղութեամբ ՀՕՊ Ս-75 (C-75) զենիթահրթիռային համալիրով (ԶՀՀ)[6]: Այլ վարկածով խոցումը կատարուել է Ս-125 Նեւա (C-125 Нева) զենիթահրթիռային համալիրով, իսկ օդաչուն կատարել է ինքնանետում եւ անկարգելով

---

[3] Հրամանը՝ ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 199, թ. 28-30:

[4] Владимир Анохин, Михаил Быков, *Все истребительные авиаполки Сталина. Первая полная энциклопедия* (Ստալինի բոլոր կործանիչային օդանաւային գնդերը. առաջին ամբողջական հանրագիտարան), գիտահանրամատչելի հրատ., Մոսկուա, 2014, էջ 333, 694, 179:

[5] "Авиация в локальных конфликтах" (օդանաւը տեղային հակամարտութիւններում» (http://www.skywar.ru/centralasia.html). նաեւ՝ https://www.nsa.gov/Helpful-Links/NSA-FOIA/Declassification-Transparency-Initiatives/Historical-Releases/C130-Shootdown/:

[6] Քնար Թադեւոսեան, «Հրամանատարի յաջողութեան բանաձեւը», *Հայ Զինուոր*, 14(1261):2018, էջ 20:

իջել Իգդիրում[7]: Որոշ սկզբնաղբիւրներ սխալմամբ նշում են թէ խոցուած ինքնաթիռը եղել է Ֆ-100Ս/Դ (F-100C/D) կործանիչ[8]:

1970-80ականներին ՀԽՍՀ տարածքում տեղակայուեցին ՀՕՊ նոր միջոցներ, ինչը հանրապետութեան օդային սահմանը դարձրեց աւելի անառիկ:

Ս-125 Նևա ԶՀՀով զինուորական շքերթ. Ստեփանակերտ, 9 Մայիս 2012

ՀՕՊ ԶՕՐՔԵՐԻ ԿԱԶՄԱԽՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՀում

1990ականների սկզբին Խ. Հայաստանի օդային սահմանը պաշտպանում էին խորհրդային բանակի ՀՕՊ 274րդ զենիթահրթիռային ջոկատը (սպայակոյտը Մասիսի շրջանի Չոբանքիարա բնակավայր) եւ 59րդ առանձին զենիթահրթիռային զօրաբաժինը:

274րդ զենիթահրթիռային ջոկատը բաղկացած էր 9 զենիթահրթիռային զօրաբաժիններից: Ա. զօրաբաժինը՝ տեղակայուած էր Աշտարակ քաղաքի շրջակայքում, 2րդը՝ Չոբանքիարայում, 3րդը եւ 7րդը՝ Արտաշատ քաղաքի շրջակայքում, 4րդը՝ Էջմիածնի շրջանի Բաղրամեան

[7] “Авиация в локальных”:

[8] Сергей Линник, “Не дать прорваться Советам: Истребительная авиация Турции в годы «холодной войны»” (Թոյլ չտալ Խորհուրդներին ճեղքել. Թուրքիայի կործանիչ ռազմօդանաւերը «Սառը պատերազմի» տարիներին), (https://topwar.ru/165785-derzhala-sssr-v-naprjazhenii-istrebitelnaja-aviacija-turcii-v-gody-holodnoj-vojny.html) :

գիւղում, 5րդը՝ Զուարթնոց օդակայանում, 6րդը՝ Սովետաշէնում (ներկայիս Նուպարաշէն), 8րդը՝ Ձորաղբիւրում, 9րդը՝ Երեւան քաղաքի Դաւիթաշէնի շրջանում[9]: Ա., Բ. եւ Գ. զօրաբաժինները մարտական հերթապահութիւն էին իրականացնում Ս-75 ՋՀՀերով, իսկ Դ., Ե., Զ., Է., Ը. եւ Թ. զօրաբաժինները՝ Ս-125 զենիթահրթիռային համալիրներով[10]: Մինչեւ 1988՝ Ս-125 զենիթահրթիռային ՋՀՀերը կրում էին նաեւ միջուկային մարտագլխիկներ՝ նախատեսուած միաժամանակ մեծաթիւ օդային թիրախներ խոցելու համար, սակայն 1988-89ին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) շուրջ ստեղծուած իրադարձութիւնների պատճառով, այդ մարտագլխիկները դուրս բերուեցին Հայաստանից[11]: Այդ նոյն իրադարձութիւններով պայմանաւորուած կասեցւում է նաեւ ՀՀում մեծ հեռահարութեան Ս-200 (Ը-200) ՋՀՀերի տեղակայումը, որը նախատեսուած էր իրականացնել Զուարթնոց օդակայանի տարածքում[12]:

Ինչ վերաբերում է 59րդ առանձին զենիթահրթիռային զօրաբաժնին, ապա այն մարտական հերթապահութիւն էր իրականացնում 2Կ-11 Կրուգ (2K-11 Круг) ՋՀՀերով (թուով 9 արձակման կայանքներ՝ 54 հրթիռով)[13]:

ՀՀում, միաժամանակ, տեղակայուած էին 748րդ (սպայակոյտը՝ Զոբանքիարա) եւ 1902րդ (սպայակոյտը՝ Լենինական) ռադիօարհեստագիտական գումարտակները, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած էր երկուական ռադիօտեղորոշիչ վաշտերից, որոնք, համապատասխանաբար, տեղակայուած էին Բաղրամեանի շրջանի Դալարիկ գիւղում, Եղէգնաձորի շրջանի Խաչիկ գիւղում, Արագածի շրջանի Ալագեազ գիւղում ու Կամօ (ներկայիս Գաւառ) քաղաքում: Բոլոր 4 վաշտերն էլ մարտական հերթապահութիւն էին իրականացնում Պ-13 (П-13), Պ-15 (П-15) եւ Պ-18 (П-18) ռադիօտեղորոշիչ կայանքներով[14]:

1990ին, երբ ակնյայտ դարձաւ ԽՍՀՄ փլուզման անխուսափելիութիւնը, Հայաստանում սկսուեց բանակաշինութեան[15] գործընթացը, որն ընթացաւ արագ եւ համակարգուած:

---

[9] ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 641, թ. 145:

[10] Նոյն, թ. 146:

[11] Նոյն, թ. 141:

[12] Նոյն:

[13] Նոյն, թ. 148:

[14] ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 641, թ. 147:

[15] Բանակաշինութեան մասին մանրամասն տե՛ս՝ Արծրուն Յովհաննիսեան, *Բանակաշինութիւնը Հայաստանի Երրորդ Հանրապետութիւնում*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2015:

Դեռեւս 1990 Օգոստոսի 15ին ՀԽՍՀ գերագոյն խորհուրդն ընդունում է մշտական յանձնաժողովներ կազմելու որոշում, որով ստեղծում է նաեւ պաշտպանութեան եւ ներքին գործերի մշտական յանձնաժողով[16]: Յաջորդ օրը նորաստեղծ յանձնաժողովի նախագահ է ընտրւում Վազգէն Սարգսեանը[17]: Նոյն օրը ՀԽՍՀ գերագույն խորհուրդը կայացնում է որոշում պաշտպանութեան եւ ներքին գործերի մշտական յանձնաժողովի կազմի մասին[18]:

Արդէն 1991 Մայիսի 4ին ՀՀ կառավարութիւնն ընդունում է ՀՀ նախարարների խորհրդին առընթեր պաշտպանութեան կոմիտէ (Պաշտկոմ) ստեղծելու մասին թիւ 325 որոշումը[19]: Պաշտկոմի առանցքը բաղկացած էր գլխաւոր վարչութիւնից, ռազմական տնտեսութեան եւ արիըստագիտութեան վարչութիւնից եւ կադրերի բաժնից[20]: Նոյն օրը ՀՀ նախարարների խորհրդի կայացրած մէկ այլ՝ թիւ 326 որոշմամբ Վահան Շիրխանեանը նշանակւում է Պաշտկոմի նախագահ, զօրավար-հազարապետ (յետագայում զօրավար-գնդապետ) Գուրգէն Դալիբալթայեանը՝ նախագահի առաջին տեղակալ-գլխաւոր սպայակոյտի պետ, իսկ ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ գնդապետ (յետագայում զօրավար-տեղակալ) Վաղարշակ Յարութիւնեանը՝ Պաշտկոմի նախագահի առաջին տեղակալ[21]:

Կարճ ժամանակ անց Պաշտկոմի հիման վրայ ձեւաւորւում է նոր գերատեսչութիւն. 1991 Դեկտեմբերի 5ին ՀՀ նախագահ Լեւոն Տէրպետրոսեանի ՆՀ-21 հրամանագրով Վազգէն Սարգսեանը նշանակում է ՀՀ պաշտպանութեան նախարար[22], իսկ 1992 Յունուարի 28ին ՀՀ կառավարութիւնը, ի կատարումն 1991 Դեկտեմբերի 4ի «Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կազմի եւ կառուցուածքի մասին» օրէնքի, ընդունում է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան մասին թիւ 62 որոշումը[23]:

1992 Յունուարին նորաստեղծ նախարարութեան կազմում ստեղծւում է ՀՕՊ եւ օդանաւային միացեալ վարչութիւնը[24]:

---

[16] Որոշումը՝ ՀԱԱ, ֆ. 207, ցուցակ 64, գործ 1, թերթ 90:
[17] Ընտրութեան հաշուիչ յանձնաժողովի արձանագրութիւնը՝ ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 1, թ. 95:
[18] Որոշումը եւ յանձնաժողովի կազմը՝ ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 1, թ. 96:
[19] Որոշումը՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 317, թ. 1-2:
[20] Նոյն, թ. 3:
[21] Որոշումը՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 318, թ. 1:
[22] Հրամանը՝ ՀԱԱ, ֆ. 207, ց. 66, գ. 23, թ. 24:
[23] Որոշումը՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 167, գ. 62, թ. 1-3:
[24] Յովհաննիսեան, էջ 62:

Նոյն թուականի կէսերին սկսուեց խորհրդային բանակի սպառազինութեան, այդ թւում ՀՕՊ միջոցների վերաբաշխման գործընթացը ՀՀում: 1992 Մայիսի 15ին Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում ՀՀի, Ռուսաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի եւ Ուզբեկստանի հետ միասին ստորագրուեց հաւաքական անվտանգութեան համաձայնագիր[25], որը իրաւական հիմք ստեղծեց Հայաստանում տեղակայուած անդրկովկասեան ռազմական շրջանի 7րդ պաշտպանական համազօրային բանակի (սպայակոյտը գտնւում էր Երեւանում), 7րդ եւ 9րդ պաշտպանական շրջանների (ռուս.՝ укрепрайон), ՀՕՊ 19րդ առանձին բանակի կազմում գործող 274րդ զենիթահրթիռային ջոկատի, 59րդ զենիթահրթիռային զօրաբաժնի եւ ուղղաթիռային 7րդ պաշտպանական գնդի սպառազինութեան փոխանցման համար: Օդանաւային եւ ՀՕՊ միջոցներից, ընդհանուր առմամբ, ՀՀ զինուած ուժերն ստացան 13 Մի-24 (Ми-24) հարուածային ուղղաթիռ, 4 ՍՈՒ-25 (Су-24) գրոհիչ ինքնաթիռ, Կրուգ-Մ1 ԶՀՀերի 27 արձակման կայան՝ 349 հրթիռներով, 9Կ33 Օսա-Ակ (Оса-АК) ԶՀՀեր՝ 40 հրթիռներով, Ս-75Մ, Ս-125Մ, Ստրելա-10 (Стрела-10) ԶՀՀեր, ԶՍՈՒ-23-4 Շիլկա (ЗСУ-23-4 Шилка) զենիթային ինքնագնաց կայանքներ, ԶՈՒ-23-2 (ЗУ-23-2) զենիթային կայանքներ, Ս-60 (С-60) զենիթահրետանային կայանքներ, Ստրելա-1 (Стрела-1), Ստրելա-2Մ (Стрела-2М), Իգլա-1 (Игла-1՝ միայն սրանից 40 հատ արձակման կայան իր 200 հրթիռներով) դիւրակիր զենիթահրթիռային համալիրներ (ԴԶՀՀ), ինչպէս նաեւ Պ-12, Պ-13, Պ-14, Պ-15, Պ-18, Պ-19, Պ-35, Պ-37, Պ-40 ռադիոտեղորոշիչ կայաններ[26]:

---

[25] Համաձայնագրի յօդուածները տե՛ս՝ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) պաշտօնական կայքէջում՝ https://odkb-csto.org/25years/:

[26] *Союзники* (Դաշնակիցներ), խմբ.՝ Կ. Վ. Մակիենկօ, Մոսկուա, Ռազմավարութիւնների եւ արհեստագիտութեան վերլուծութեան կենտրոն, 2020, էջ 17. նաեւ՝ В ожидании Бури: Южный Кавказ (Փոթորիկին սպասելիս. Հարաւային Կովկաս), խմբ.՝ Կ. Վ. Մակիենկօ, Մոսկուա, Ռազմավարութիւնների եւ արհեստագիտութեան վերլուծութեան կենտրոն, 2018, էջ 64-65. նաեւ՝ Михаил Жирохов, «Воздушная война в Нагорном Карабахе 1989-1994» (Օդային պատերազմը Լեռնային Ղարաբաղում 1989-1994), *журнал Авиамастер*, Մոսկուա, 6:2000. (http://otvaga2004.ru/boyevoe-primenenie/boyevoye-primeneniye04/karabax-vozdushnoj-vojny/). նաեւ՝ Сергей Линник, Современное состояние системы ПВО Армении (Հայաստանի ՀՕՊ համակարգի ներկայ վիճակը)՝ https://topwar.ru/136057-sovremennoe-sostoyanie-sistemy-pvo-armenii.html). նաեւ՝ *Раздел бывших советских Вооружённых сил после распада СССР* (Նախկին խորհրդային զինուած ուժերի բաժանումը ԽՍՀՄ փլուզումից յետոյ), մաս 2-րդ (http://kombat-

1992 Սեպտեմբերի 14ի ՀՀ պաշտպանութեան նախարարի հրամանով ստեղծում է ՀՕՊ վարչութիւնը[27]: Վարչութեան առաջին պետ է նշանակում Ալիկ Սարգսեանը, ով 1976 Օգոստոսի 24ին, որպէս զենիթահրթիռային ջոկատի սպայակոյտի պետ, ղեկավարել էր թուրքական ՌՕՈՒի սահմանախախտ ՌՖ-5Ա հետախուզական ինքնաթիռի ոչնչացման գործողութիւնը, եւ ով յետագայում՝ 1995ին արժանացաւ զօրավար-հազարապետի կոչման[28]: Նորաստեղծ վարչութեան խնդիրն էր ՀՀ տարածքում տեղաբաշխուած նախկին խորհրդային ՀՕՊ զօրամասերի սպառազինութեան եւ *տեխնիկայ*ի ստանձնումը: Դրա արդիւնքում 1992 Սեպտեմբեր-Նոյեմբեր ամիսներին կազմաւորուեցին ՀՕՊ հինգ զօրամասեր, որոնք դարձան ՀՀ ՋՈՒ ՀՕՊ զօրքերի հիմքը[29]:

ՀՀ ՋՈՒ ՀՕՊը իր կառուցուածքով կրկնում էր ԽՍՀՄ զինուած ուժերի ՀՕՊի կառուցուածքը[30]: 1992 Սեպտեմբերին ստեղծւում է նաեւ ՀՀ օդային տարածքի հսկման եւ ղեկավարման կենտրոնը[31]:

ԽՍՀՄ բանակից ստացուած ռազմական սպառազինութիւնը եւ *տեխնիկան*, այդ թւում ՀՕՊ միջոցները, սակայն, այդ ժամանակ արդէն ոչբարուօք վիճակում էին գտնւում եւ կարիք ունէին վերանորոգման ու արդիականացման: Հետեւաբար, նախկին ԽՍՀՄ ռազմարդիւնաբերական համալիրի (ՌԱՀի) մաս կազմող հայաստանեան ձեռնարկութիւններն ու գիտահետազօտական կենտրոններն իրենց գիտարտադրական ներուժը սկսեցին ծառայեցնել վերստին ստեղծուած հայկական բանակի ռազմական կարիքներին: Ստեղծուած իրավիճակում ՀՀում ՌԱՀի ստեղծումը դարձաւ կենսական անհրաժեշտութիւն: Բանակաշինութեանը զուգահեռ, ՀՀում առաջին քայլերն են արւում ռազմարդիւնաբերական համալիրի ստեղծման[32] ուղղութեամբ: 1991 Նոյեմբերի 5ին ՀՀ նախարարների խորհրդի նախագահի պաշտօնակատար Հրանտ Բագրատեանը հաստատում է ՀՀ նախարարների խորհրդին առընթեր ռազմարդիւնաբերական յանձ-

---

bvoku.com/publ/voennaja_tematika/razdel_byvshikh_sovetskikh_vooruzhjonnykh_sil_posle_raspada_sssr_2_chast/4-1-0-100):

[27] ՀՀ ՊՆ պաշտօնական կայքէջ՝ https://mil.am/hy/structures/20 :

[28] Հրամանատարի յաջողութեան բանաձեւը, էջ 22:

[29] Սէյրան Օհանեան, *Հայկական բանակի 20-ամեայ փարեգրութիւն (համառօտ ուրուագիծ)*, ՀՀ ՊՆ, Երեւան, 2012, էջ 108:

[30] ՀԱԱ, ֆ. 113, g. 181, գ. 660, թ. 163:

[31] Օհանեան, էջ 111:

[32] Այդ մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Հայկ Նազարեան, Յակոբ Գրիգորեան, «Փաստաթղթեր արցախեան ազատամարտի տարիներին ՀՀ ռազմարդիւնաբերական համալիրի ստեղծման եւ զարգացման պատմութեան վերաբերեալ», *Բանբեր Հայաստանի արխիւների*, 2(128):2020, էջ 168-205:

նաժողովի դրոյթները[33]: 1992 Փետրուարի 9ին ՀՀ կառավարութեան թիւ 36կգ կարգադրութեամբ հաստատւում է ռազմարդիւնաբերական յանձնաժողովի կազմը՝ ՀՀ փոխվարչապետ Բագրատեանի նախագահութեամբ[34], իսկ Փետրուարի 25ին ՀՀ նախագահ Տէրպետրոսեանի հրամանով հաստատւում է ՀՀ ռազմարդիւնաբերական յանձնաժողովի կանոնադրութիւնը[35]: 1992 Յուլիսի 1ին տեղի է ունենում ՀՀ նախարարների խորհրդին առընթեր ռազմարդիւնաբերական յանձնաժողովի կազմում գործող արհեստագիտական խորհրդի նիստ՝ Վիգէն Ճիտէճեանի նախագահութեամբ: Նիստում որոշւում է ստեղծել ՀՀ ՀՕՊին վերաբերող աշխատանքները կազմակերպող յատուկ յանձնաժողով՝ գնդապետ Ռուբէն Մալեանցի նախագահութեամբ[36]:

Շուտով սկսւում են ՀՀ ՀՕՊ ԶՀՀերի ու ռադիոտեղորոշիչ կայանների արդիականացման աշխատանքները ՀՀ ռազմարդիւնաբերական ձեռնարկութիւններում: Սրան նպաստեց այն, որ հայաստանեան մի շարք ռազմարդիւնաբերական գիտահետազօտական կենտրոններ եւ ձեռնարկութիւններ դեռեւս ԽՍՀՄ տարիներին մասնակցել էին տարբեր զենիթահրթիռային համալիրների ու ռադիոտեղորոշիչ կայանների ստեղծման ու արտադրման գործընթացին: Մասնաւորապէս Հայէլեկտրագործարանի յատուկ շինարարական բիւրոյի հիմքի վրայ կազմակերպուած էլեկտրամեքենաշինութեան յատուկ շինարարական բիւրոյի հայկական մասնաճիւղին ԽՍՀՄ նախարարաց խորհրդի 1960 Հոկտեմբերի 27ի որոշմամբ եւ դրանից բխող ՀԽՍՀ նախարարաց խորհրդի 1960 Դեկտեմբերի 6ի կարգադրութեամբ յանձնարարուել էր իրականացնել «Օսա» զենիթահրթիռային համալիրների էլեկտրասնուցման համակարգերի մշակումն ու պատրաստումը[37]: Նոյն Հայէլեկտրագործարանը արտադրում էր կապի միջոցներ՝ նախատեսուած ՀՕՊ 2Կ12 Կուբ (2К12 Куб), Ռ-3-25 Դալ (Р3-25 Даль), 2Կ-11 Կրուգ, Ս-75Մ, Ս-125, Ս-200 ԶՀՀերի համար[38]:

---

[33] ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 641, թ. 14-16:

[34] Կարգադրութիւնը տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 185, գ. 754, թ. 1-2:

[35] Կանոնադրութիւնը տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 641, թ. 125-128:

[36] Նիստի արձանագրութիւնը տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 660, թ. 1-2:

[37] Կարգադրութիւնը տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 77, գ. 335, թ. 1-2:

[38] Կարէն Խաչատրեան, *Հայաստանը ԽՍՀՄ ռազմարդիւնաբերական համալիրի համակարգում (1922-1991 թթ.)*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2015, էջ 195-96:

Արդիւնաբերական մէկ այլ հսկայ՝ Հրազդանմեքենայ («Հրազդանմաշ») արտադրական միաւորումը (ԱՄ)[39], որի հիմնական պատուիրատուն մինչեւ 1990 ԽՍՀՄ պաշտպանութեան նախարարութիւնն էր, մեծ մասնակցութիւն է ունեցել ԽՍՀՄ ՀՕՊ համակարգի ստեղծման մէջ՝ արտադրելով ռադիոէլեկտրոնային սարքաւորումներ, շարժական եւ անշարժ կապի միջոցներ: 1981-90՝ Հրազդանմեքենան արտադրում է 1Լ22 (1Л22) տիպի միջին հզօրութեան վերգետնեայ ռադիոտեղորոշիչ կայաններ, որոնք հաւաքուած էին Ուրալ-43203 մակնիշի բեռնատար մեքենայի վրայ[40]: Արդէն Հայաստանի անկախութիւնից յետոյ Հրազդանմեքենան ՀՀ ՊՆ պատուէրով իրականացնում է ՀՕՊ զենիթահրթիռային համալիրների, ռադիոտեղորոշիչ կայանների ռադիո*տեխնիկա*կան եւ տեսաէլեկտրոնային համակարգերի ու սարքերի, ռադիոկապի միջոցների նորոգում եւ արդիականացում: 1990ականների սկզբներին Հրազդանմեքենան իրականացնում է արդիականացուած 1Լ22 ռադիոտեղորոշիչ կայանների *անտէնայ*ին համակարգի ճառագայթման չափորոշիչների չափումներ՝ Կոտայքի շրջանի Զառ գիւղի մօտակայքում գտնուող ալեհաւաքների վարժահրապարակում: Յատկանշական է, որ այստեղ դեռեւս 1981-84՝ անցկացուել են օդանաւորդութեան համար օդակայանների շրջանային տեսանելիութեան Սկալա-ՄՊ (Скала-МП) տիպի ռադիոտեղորոշիչ կայանների ալեհաւաքների համակարգի նախագծման, պատրաստման եւ փորձարկման աշխատանքները[41]:

Եւ ահա հայ մասնագէտների կողմից հայկական ձեռնարկութիւններում իրականացուած աշխատանքների արդիւնքում ՀՀ ԶՈՒ ՀՕՊ միջոցները աստիճանաբար կարգի բերուեցին եւ կրկին դրուեցին մարտական հերթապահութեան մէջ:

Հայկական ԶՈՒի, այդ թւում ՀՕՊ զօրքերի ստեղծման ու կայացման գործում առանցքային հարց էր նաեւ համապատասխան կադրերի համալրումն ու պատրաստումը: Սկզբնապէս այդ հարցը հիմնականում լուծուեց ՀՀ ժամանած նախկին խորհրդային բանակի սպաների կողմից նորաստեղծ ՀՀ ԶՈՒի շարքերը համալրելու ճանապարհով: Այդպիսի սպա-

---

[39] ՀՀ Կառավարութեան 2001 Սեպտեմբերի 13ի թիւ 858 որոշմամբ «Հրազդանմեքենայ» ձեռնարկութիւնը վերակազմակերպւում է «Պատնէշ» ՓԲԸի՝ 100 տոկոս պետական բաժնեմասով: Աւելի ուշ ՀՀ կառավարութեան 2003 Օգոստոսի 14ի թիւ 1016-Ա որոշմամբ ընկերութեան բաժնետոմսերի 100 տոկոսի կառավարումը վերապահուեց ՀՀ ՊՆին (տե՛ս՝ ընկերութեան պաշտօնական կայքէջը՝ https://www.patnesh.info.am/about/):

[40] ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 660, թ. 198-99:

[41] Նոյն, էջ 219:

ների թիւը անցնում էր 4000ից[42], որոնց թւում կային նաեւ ՀՕՊ զօրքերի փայլուն մասնագէտներ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՕՊ ԶՕՐՔԵՐԸ ԱՐՑԱԽԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

1990ականների սկզբներին բանակաշինութեան զուգահեռ, ՀՕՊ զօրքերի ստեղծման գործընթաց սկսուեց նաեւ Արցախում: 1992 Մարտի 26ին ստեղծւում է ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր պաշտպանութեան կոմիտէ (նախագահ՝ Սերժ Սարգսեան), որի խնդիրներն էին ինքնապաշտպանական ջոկատների միաւորումը, նիւթա*տեխնիկա*կան հիմքի ստեղծումը, սպառազինութեան ու *տեխնիկայ*ի ձեռքբերումը, մատակարարման կարգաւորումը[43]: Կարճ ժամանակ անց՝ 1992 Օգոստոսի 15ին պաշտպանութեան կոմիտէն վերանուանւում է «ԼՂՀ պաշտպանութեան պետական կոմիտէ», որի նախագահ է նշանակւում Ռոբերտ Քոչարեանը[44]: Վերջինիս 1993 Նոյեմբերի 10ի թիւ 323 հրամանով՝ Արցախի ինքնապաշտպանական ուժերը (ԻՊՈՒ) վերակազմաւորւում են բանակի կառուցուածքին ու գործառոյթին համապատասխան՝ վերածուելով ԼՂՀ պաշտպանութեան բանակի (ՊԲ)[45]:

Արցախում սկսուած բանակաշինութեան գործընթացն, սակայն, առանց ՀՀ գործուն մասնակցութեան եւ աջակցութեան անհնարին կը լինէր, հաշուի առնելով լայնածիր բնոյթ ստացած պատերազմի հանգամանքը: Հակառակորդ Ադրբեջանի Հանրապետութիւնը, տիրապետում էր անհամեմատ աւելի մեծ ռազմատնտեսական աղբիւրների, այդ թւում օդային միջոցների:

Ադրբեջանի ԶՈւերը[46] 1992ի կէսերին ստացան իրենց տարածքում տեղակայուած նախկին խորհրդային 19րդ առանձին ՀՕՊ բանակի եւ 34րդ օդային բանակի (սպայակոյտը գտնւում էր Բաքւում) սպառազինութիւնը: Մասնաւորապէս Ադրբեջանի ՌՕՈՒին անցան Սիտալ-Չայի ռազմախարիսխում տեղակայուած 80րդ գրոհային գունդը՝ բաղկացած Սու-25 գրոհիչներից, Նասոսնայա ռազմախարիսխում տեղակայուած 82րդ կործանիչ-օդանաւային գունդը՝ բաղկացած ՄիԳ-25ՊԴՍ (МиГ-25ПДС) եւ ՄիԳ-31 կործանիչներից, Քիւրդամիրի ռազմախարիսխում տեղակայուած 976րդ ռմբակոծիչ-օդանաւային գունդը՝ բաղկացած Սու-24 (Су-24) ռմբակոծիչնե-

---

[42] Յովհաննիսեան, էջ 205:

[43] *Ղարաբաղեան ազատագրական պատերազմ, 1988-1994. հանրագիտարան*, «Հայկական Հանրագիտարան» հրատ., Երեւան, 2004, էջ 554:

[44] Նոյն, էջ 555:

[45] Նոյն, էջ 549:

[46] Կազմաւորուել է Ադրբեջանի գերագոյն խորհրդի՝ զինուած ուժեր ստեղծելու մասին 1991 Հոկտեմբերի 9ի որոշմամբ (*В ожидании Бури*, էջ 11):

րից, Դալիարի ռազմախարիսխում տեղակայուած 882րդ հետախուզա-օդանաւային գունդը՝ բաղկացած ՄիԳ-25ՌԲ (МиГ-25РБ) եւ Սու-24 (Су-24МР) հետախուզական ինքնաթիռներից: Ընդհանուր առմամբ Ադրբեջանին անցած մարտական ինքնաթիռների թիւը անցնում էր 50ից: Բացի այդ, ադրբեջանական կողմին անցան Նասոսնայա ռազմախարիսխում տարածքում գործող 210րդ օդանաւային-վերանորոգման գործարանում այդ պահին գտնուող Սիրիայի Արաբական Հանրապետութեան ՌՕՈՒի ՄիԳ-25Պ եւ ՄիԳ-25ՌԲ ինքնաթիռները (5 հատ), ինչպէս նաեւ երկրի տարածքում տեղակայուած երկու ուսումնական օդանաւային գնդերը՝ ի-րենց 109 հատ Լ-29 (Л-29) եւ 168 հատ Լ-39 (Л-39) ուսումնամարտական ինքնաթիռներով[47]:

Աւելին, 1992ի երկրորդ կէսին Ադրբեջանը Ուզբեկստանից գնեց 2 ՄիԳ-21ՍՄՏ (МиГ-21СМТ) կործանիչներ, Վրաստանից (Թբիլիսիի օդանաւային գործարանից)՝ 3 նորագոյն արտադրութեան Սու-25 գրոհիչներ, իսկ 1992-93ի ընթացքում Ուկրաինայից՝ 6 Սու-17Մ3 (Су-17М3) կործանիչ-ռմբակոծիչներ, 8 ՄիԳ-21ՍՄ կործանիչներ եւ 2 ՄիԳ-25ՌԲ հետախուզական ինքնաթիռներ[48]:

Ադրբեջանի ՌՕՈՒն բացի մարտական ինքնաթիռներց, ստանում է նաեւ Սանգաչալի բնակավայրում տեղակայուած 386րդ առանձին ուղղաթիռային գնդի սպառազինութիւնը՝ շուրջ երկու տասնեակ հարուածային Մի-24 եւ ռազմափոխադրական Մի-8 ուղղաթիռներ[49]:

Ինչ վերաբերում է ԼՂՀ ԻՊՈՒի ունեցած ՀՕՊ միջոցներին, ապա 1991ի վերջ–1992 սկզբի դրութեամբ այն ունէր հետեւեալ պատկերը.- 4 միաւոր ԶՍՈՒ-23-4 Շիլկա զենիթային ինքնագնաց կայանք, 4 միաւոր Ստրելա-10 զենիթահրթիռային կայանք, եւ միքանի Ստրելա-2Մ դիւրակիր զենիթահրթիռային համալիրներ (ԴԶՀՀ)[50]: Նշուած միջոցները ստացուել

---

[47] В ожидании Бури, էջ 27. նաեւ՝ Раздел бывших советских Вооружённых сил после распада СССР (Նախկին խորհրդային զինուած ուժերի բաժանումը ԽՍՀՄ փլուզումից յետոյ), մաս Ա. (http://kombatbvoku.com/publ/voennaja_tematika/razdel_byvshikh_sovetskikh_Vooruzhjonnykh_sil_posle_raspada_sssr_1_chast/4-1-0-99). նաեւ՝ Жирохов:

[48] Мамед Велимамедов, “ВВС Азербайджана в Карабахской войне” (Ադրբեջանի ՌՕՈՒն ղարաբաղեան պատերազմում) (http://www.airwar.ru/history/locwar/xussr/azerb/azerb.html):

[49] Мамед Велимамедов, “Вертолеты ВВС Азербайджана в Карабахской войне” (Ադրբեջանի ՌՕՈՒի ուղղաթիռները ղարաբաղեան պատերազմում) (http://www.airwar.ru /history/locwar/xussr/azerbCopter/azerbcopter.html):

[50] Սենոր Հասրաթեան, *Պաշտպանութեան բանակի զօրատեսակները, ծառայութիւնները եւ առանձին սպորաբաժանումները ղարաբաղեան պատերազմի*

էին խորհրդային բանակի Անդրկովկասեան Ռազմական շրջանի 4րդ համազօրային բանակի 23րդ զօրաբաժնի 366րդ գնդի (տեղակայուած էր մայրաքաղաք Ստեփանակերտում) սպառազինութեան կազմից: Շուտով ստեղծում են դրանց հաշուարկները:

1991ի աշնանը, նախ Ստեփանակերտի բարձունքներից մէկից, որը յայտնի էր «26» անուամբ, Արցախի ինքնապաշտպանական ուժերը Ստրելա-2Մ ԴՀՀՀից խոցում են հակառակորդի Մի-8 ռազմափոխադրական ուղղաթիռ, աւելի ուշ՝ Նոյեմբերի 20ին, Մարտունու շրջանի Բերդաշէն գիւղի մօտ կրկին Ստրելա-2Մով խոցւում է Ադրբեջանի ուժային կառոյցների շուրջ երկու տասնեակ բարձրաստիճան պաշտօնեաների տեղափոխող մէկ այլ Մի-8 ռազմափոխադրական ուղղաթիռ, իսկ արդէն 1992 Ապրիլի 4ին Կարմիր շուկայ--Ղաջարի հատուածում կրկին Ստրելա-2Մ համալիրով խոցւում է Ադրբեջանի ՌՕՈՒի առաջին Մի-24 հարուածային ուղղաթիռը[51]:

Շուտով՝ 1992 Յունիսի 13ին, խոցւում է նաեւ հակառակորդի առաջին մարտական ինքնաթիռը՝ Սու-25 գրոհիչը, Ասկերանի բերդի մօտ, միաժամանակ, Ստրելա-2Մ ԴՀՀՀից եւ ՀՍՈՒ-23-4 Շիլկա զենիթահրթիռային ինքնագնաց կայանքից խոցւում է Ադրբեջանի ՌՕՈՒի առաջին Սու-25 գրոհիչը[52]:

1992 Յուլիսին ԼՂՀ ԻՊՈՒի կազմում ստեղծւում է Ս-60 զենիթահրետանային կայանքներով համալրուած առաջին մարտկոցը, իսկ Յուլիսի 22ին ԻՊՈՒն ստանում է առաջին Պ-15 ռադիոտեղորոշիչ կայանը, ինչը թոյլ տուեց ստեղծել ռադիոտեղորոշիչ հետախուզութեան մարտկոցը[53]: Վերջինիս ստեղծումով հնարաւոր դարձաւ ժամանակին հաւաստանշել հակառակորդի օդուժի թռիչքները:

1992 Օգոստոսի 25ին, երկօրեայ ռազմերթից յետոյ ՀՀից Արցախ են հասնում 3 հատ Օսա-ԱԿ ԶՀՀեր, որոնք տեղակայւում են Շօշում, Խնածախում եւ Կրկժանում՝ Ստեփանակերտի շուրջ ստեղծելով փրկութեան եռանկիւնի[54], ինչպէս նաեւ երկու Պ-18 ռադիոտեղորոշիչ կայաններ[55]:

1992ի միայն Մայիս-Հոկտեմբեր ամիսների ընթացքում ԼՂՀ ԻՊՈՒի ՀՕՊ միջոցները ոչնչացրել էին Ադրբեջանի ՌՕՈՒի 1 Սու-24, 2 Սու-24Ռ, 1

գլխաւոր ռազմագործողութիւններում, «Դիզակ պլիւս» հրատ., Ստեփանակերտ, 2010, էջ 93:

[51] Նոյն, էջ 92, 96:

[52] Օհանեան, էջ 86:

[53] Հասրաթեան, էջ 98:

[54] Տիգրան Դեւրիկեան, *Երկնքի պահապաններն ու փիրակալները*, ՀՀ պաշտպանութեան նախարարութեան տեղեկատուութեան վարչութիւն, Երեւան, 2008, էջ 8:

[55] Հասրաթեան, էջ 100:

Սու-25, 2 ՄիԳ-25 մարտական ինքնաթիռներ, 5 Մի-24 եւ 3 Մի-8 ուղղաթիռներ[56]:

Նոյն թուականի Նոյեմբերին ՀՀից Արցախ են տեղափոխւում մեծ հեռահարութեամբ գործող 2Կ-11 Կրուգ ԶՀՀեր: 1992 Նոյեմբերի 27ին Ստեփանակերտի երկնքում Կրուգ ԶՀՀով խոցւում է հակառակորդի Սու-17 կործանիչ-ռմբակոծիչը[57]:

Այս նոյն ժամանակահատուածում Ադրբեջանի ՌՕՈՒն աշխուժ մարտական թռիչքներ է իրականացնում ՀՀ արեւելեան սահմանամերձ շրջաններում: 1992 Դեկտեմբերի 11ին ՀՀ օդային տարածքում՝ Վարդենիսի ուղղութեամբ, ՀՀ ՀՕՊ զօրքերը խոցում են Ադրբեջանի ՌՕՈՒի ՄիԳ-25 ինքնաթիռը[58]:

1992 Դեկտեմբերին Արցախ են բերւում եւս մէկ Պ-18, ինչպէս նաեւ մէկ Պ-45 ռադիոտեղորոշիչ կայանքներ[59]:

1993ի ձմռանը Օսա-ԱԿ ԶՀՀերի թիւը աւելանում է եւ արդիւնքում ստեղծւում է դրանցից կազմուած երկրորդ մարտկոցը: Մարտկոցներից մէկը տեղակայուեց Մարտունիում, իսկ միւսը՝ Ասկերանում[60]:

ԼՂՀ ԻՊՈՒի մոտօհրաձգային զօրքերը նոյնպէս զինուած էին որոշ քանակութեամբ ՀՕՊ ԴԶՀՀ միջոցներով: Այս առումով յիշարժան է 1993 Յունուարի 15ին Սրխաւենդի հայկական դիրքերը գրոհելու ժամանակ Շուշիի առանձնակի գումարտակի փոխհրամանատար, ՊԲ հազարապետ (1996, յետմահու), Արցախի հերոս (2000) Պետրոս Ղեւոնդեանի (Պետօ) կողմից Իգլա ԴԶՀՀով հակառակորդի ՄիԳ-25 ինքնաթիռի խոցումը[61]: ԼՂՀ ՊՊԿ նախագահի 1993 Մարտի 25ի թիւ 01 մարտական հրամանով ռազմաճակատում գործող մոտօհրաձգային ստորաբաժանումներում կենտրոնացուեցին մեծ թուով Իգլա ԴԶՀՀեր[62]:

Նոյն թուականի Մարտի վերջին Արցախում յայտնուեցին նաեւ Ս-125 ԶՀՀերը[63]: Արդիւնքում, ԼՂՀ օդային տարածքի պաշտպանութիւնը դարձաւ շարակարգուած՝ բաղկացած տարբեր հեռահարութեան ԶՀՀերից: 1993 Սեպտեմբերի 1ին ձեւաւորւում է ԼՂՀ ԻՊՈՒ առաջին զենիթահրթի-

---

[56] *Ղարաբաղեան ազատագրական պատերազմ. 1988-1994. հանրագիտարան*, էջ 21:

[57] Դեւրիկեան, էջ 17:

[58] Նոյն, էջ 13:

[59] Հասրաթեան, էջ 113:

[60] Դեւրիկեան, էջ 20:

[61] Авиация влокальных конфликтах, (http://www.skywar.ru/karabakhinc.html):

[62] Հասրաթեան, էջ 117:

[63] Յովհաննիսեան, *Ռազմարուեստ. հատոր 1. օդային գերակայութիւն*, Հեղինակային հրատ., Երեւան, 2016, էջ 399:

ռային գունդը: ՊՊԿ նախագահի թիւ 824 հրամանով զօրամասի հրամանատար է նշանակւում հարիւրապետ, յետագայում ՀՀ ԶՈՒ ՀՕՊ զօրքերի պետ, գնդապետ Նիկոլայ Բաբայեանը[64]: Նորաստեղծ գնդի կազմում ստեղծուեց Օսա-ԱԿների զօրաբաժինը, որը պատերազմում խոցեց հակառակորդի օդային թիրախների մեծ մասը[65]:

1993ի աշնան դրութեամբ, Ադրբեջանի ՌՕՈՒՆ կորցրել էր 1 ՄիԳ-21, 1 ՄիԳ-23, 2 Սու-25, 2 ՄիԳ-25ՌԲ, 1 ՄիԳ-25ՊՏ եւ 3 Լ-29 մարտական ինքնաթիռներ[66]:

1994 Փետրուարի 17ին կրկին Վարդենիսի ուղղութեամբ ՀՀ ԶՈՒ ՀՕՊ զօրքերը Իգլա ԴԶՀՀով խոցում են ՀՀ տարածքում վերջին ինքնաթիռը՝ ՄիԳ-21 կործանիչը, որի օդաչուն գերի է ընկնում[67]:

1994 Մայիսի 12ի զինադադարի պահին, Ադրբեջանի ՌՕՈՒի ընդհանուր կորուստները կազմեցին 20 մարտական ինքնաթիռներ, այդ թւում Սու-17, Սու-25, ՄիԳ-21, ՄիԳ-23, ՄիԳ-25, Լ-29, Լ-39, եւ 18 ուղղաթիռներ, այդ թւում Մի-8 եւ Մի-24[68]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, ՀՀ ԶՈՒի եւ ԼՂՀ ՊԲի ՀՕՊ զօրքերի ստեղծումը ունէր կենսական նշանակութիւն՝ պայմանաւորուած սկսուած արցախեան ազատագրական պատերազմով: Խնդիրն աւելի էր բարդանում, որ ՀՕՊ զօրքերի կազմաւորման գործընթացը տեղի էր ունենում ընթացող պատերազմին զուգահեռ՝ չափազանց ծանր պայմաններում:

Շատ կարեւոր է շեշտել նաեւ այն հանգամանքը, որ ՀՀ տարածքում առկայ ՀՕՊ միջոցների, այդ թւում զենիթահրթիռային համակարգերի ու համալիրների, ռադիոտեղորոշիչ կայանքների, որոնք ստացուեցին խորհրդային բանակից, մեծ մասը *տեխնիկա*պէս արդէն հնացել էին եւ ունէին կարիք արդիականացման: Դա կազմակերպուեց եւ իրականացուեց ՀՀում՝ տեղի ռազմարդիւնաբերական ձեռնարկութիւններում եւ հայ մասնագէտների կողմից: Այդ գործընթացը յաջողութեամբ շարունակուեց նաեւ յետպատերազմեան տարիներին: Այսօր էլ շարունակում են կենսական մնալ հայկական ՀՕՊ զօրքերի շարունակական կատարելագործման եւ ՀՕՊ միջոցների արդիականացման հարցերը:

Յաջողութեամբ լուծուեց նաեւ ՀՀ ՀՕՊ զորքերը համապատասխան կադրերով համալրելու եւ նոր կադրեր պատրաստելու հարցը: Մասնաւո-

---

[64] Հասրաթեան, էջ 126-27:

[65] Դեւրիկեան, էջ 28:

[66] Жирохов:

[67] Авиация влокальных конфликтах, (http://www.skywar.ru/karabakhinc.html):

[68] Линник:

ռապէս պատերազմի տարիներին այդ հարցը հիմնականում լուծուեց ՀՀ ժամանած նախկին խորհրդային բանակի սպաների հաշուին: Այս հանգամանքը յատկապէս կարեւոր էր սպաների աւագ սերնդի կողմից ՀՀ ՀՕՊ զօրքերում ծառայութեան անցնող սպաների նոր սերնդին՝ գիտելիքի ու փորձի փոխանցման տեսանկիւնից:

Վերը նշուած խնդիրների բարեյաջող լուծումը, հնարաւորութիւն ստեղծեց, որպէսզի կազմաւորուեն եւ կայանան ՀՀ ՀՕՊ զորքերը որպէս առանցքային զօրատեսակ: Վերջինս գերազանց կատարեց իր առջեւ դրուած մարտական խնդիրը: Մասնաւորապէս, ՀՕՊ զօրքերը կարողացան ապահով դարձնել ՀՀ եւ ԼՂՀ օդային սահմանները, զրկել հակառակորդի ՌՕՈՒին օդային գերակայութիւնից եւ դրանով իսկ նպաստել արցախեան առաջին պատերազմում հայկական զօրքերի յաղթանակին:

THE FORMATION OF THE ARMENIAN AIR DEFENCE FORCES DURING THE FIRST ARTSAKH (KARABAKH) WAR

(Summary)

HAYK NAZARYAN (nazaryan_h90.90@mail.ru)

The first air defense system to secure the skies of Armenia was established in the middle of the 1930s. At the end of the 1980s the Air Defense of the Soviet Armenian Republic was maintained by the 274th Air Defense Missile Brigade of the Soviet Union.

After the proclamation of the Republic of Armenia in 1991, the Ministry of Defense was formed by the decision of the Government on January 28, 1992. On September 14 that same year, the Department of Air Defense Forces was formed by the order of the defense minister of the Republic. The newly formed department acquired the armaments and military equipment of the former Soviet Air Defense Units stationed in Armenia.

During the same period air defense forces were established in the Defense Army of the Nagorno-Karabagh Republic (Republic of Artsakh, NKR). The defense forces of both the RA and NKR actively participated in the First Artsakh War, shot down more than 30 military aircraft and helicopters of the Azerbaijani air force and made a critical contribution in the victory against the Azeri forces.

The paper is the first of a series of articles that will narrate the history of the establishment of the air defense forces in both republics, will examine their development and upgrading, will assess their equipment and capabilities and calculate the role they have played in the successive battles and skirmishes both parties have fought in the past 30 years.